ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____202 թվականի N _____ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին կետով՝

«21.1. Մրցակցային ընթացակարգերով կազմակերպվող գնման ընթացակարգերի ժամանակ պատվիրատուի ղեկավարի գրավոր համաձայնության առկայության դեպքում գնման գործընթացը կարող է կազմակերպվել վարկանիշավորման դասակարգում ունեցող կազմարեպություններից ընտրություն կատարելու ձևով՝ մեկ անձից գնման ընթացակարգով՝ թղթային տարբերակով հայտ ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում.

1) Վարկանիշավորման բարձրագույն աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպություններին հրավեր կարող է տրամադրվել անկախ գնման առարկայի գնման գնից:

2) Վարկանիշավորման բարձր աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպություններին հրավեր տրամադրվում է, եթե՝

ա. քաղաքաշինական փաստաթղթերի կազմման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 20,0 մլն ՀՀ դրամը,

բ. քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 500.0 հազ. ՀՀ դրամը,

գ. շինարարության իրականացման աշխատանքների գնման գինը չի գերազանցում 500,0 մլն ՀՀ դրամը,

դ. շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 20,0 մլն ՀՀ դրամը,

ե. քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 500,0 հազ. ՀՀ դրամը:

3) Վարկանիշավորման բարձրագույն աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպությունները ներկայացնում են միայն պայմանագրի ապահովում բանկերի կողմից տրամադրված երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևով առաջարկած գնի կամ գնման գնի առնվազն 5%-ի չափով, իսկ վարկանիշավորման բարձր աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպությունները՝ միայն պայմանագրի ապահովում բանկերի կողմից տրամադրված երաշխիքի կամ կանխիկ գումարի ձևով առաջարկած գնի կամ գնման գնի առնվազն 10%-ի չափով:

4) Վարկանիշավորման միջին աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպությունները կարող են մասնակցել պետական գնումների գործընթացներին, եթե՝

ա. քաղաքաշինական փաստաթղթերի կազմման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 2,0 մլն ՀՀ դրամը,

բ. քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 100.0 հազ. ՀՀ դրամը,

գ. շինարարության իրականացման աշխատանքների գնման գինը չի գերազանցում 50,0 մլն ՀՀ դրամը,

դ. շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 5,0 մլն ՀՀ դրամը,

ե. քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 100.0 հազ. ՀՀ դրամը:

5) Վարկանիշավորման ցածր աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպությունները կարող են մասնակցել պետական գնումների գործընթացներին, եթե՝

ա. քաղաքաշինական փաստաթղթերի կազմման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 1,0 մլն ՀՀ դրամը,

բ. քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 50.0 հազ. ՀՀ դրամը,

գ. շինարարության իրականացման աշխատանքների գնման գինը չի գերազանցում 30,0 մլն ՀՀ դրամը,

դ. շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 3,0 մլն ՀՀ դրամը,

ե. քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման աշխատանքների և ծառայությունների գնման գինը չի գերազանցում 50.0 հազ. ՀՀ դրամը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարկանիշավորման թվային հարթակի գործարկման և լիցենզավորված անձանց ըստ վարկանիշի գրանցամատյանների ձևավորումից վեց ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան